

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԻՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16 փետրվարի 2024թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան
Քարտուղար Զ.Վ.Օթարյան

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին: *զեկ. Մ.Ա.Զաքարյան/*
2. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում: */զեկ. Սմբ. Վարիչներ/*
3. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում: */զեկ. Սմբ. Վարիչներ/*
4. 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում *զեկ. Մ.Ա.Զաքարյան/*
5. «Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների Moodle համակարգում նյութերի տեղադրման, փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին» */զեկ. Սմբ. Վարիչներ/*

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 7/1

➤ Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի՝ « Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին» հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն էր.

2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի դասացուցակը ուղարկվել է ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում տեղադրման, դրանց մասին իրազեկվել են դասախոսները և ուսանողները:

Ինֆորմատիկա մասնագիտության առկա և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի մասնագիտական պրակտիկայի կազմակերպման աշխատանքները կիրականացնեն դասախոսներ Ք.Օթարյանը և Լ.Ծատուրյանը: Նշվեց նաև, որ դասախոսները պետք է ամբիոն ներկայացնեն առարկայական փաթեթները, ինչպես նաև առաջիկայում պետք է իրենց դասընթացների ուսումնական պլանները, ուսումնական նյութերն ու առաջադրանքները պատրաստեն ուսուցման էլեկտրոնային կառավարման e- learning.am հարթակում տեղադրման:

Արտահայտվեցին-Գ.Սարգսյանը ,Ա.Հովակիմյանը, :

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 7/2

Ընդունելի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ «1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ա.Հովակիմյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության 1-ին կիսամյակում հետազոտական բաղադրիչը նախատեսված էր Մաթ. մոդելավորում և թվային մեթոդներ (3-րդ կուրս՝ 17 ուսանող) և

Web-ծրագրավորում (4-րդ կուրս`20 ուսանող) առարկաներից: Դասախոսների (Ա. Մակարյան, Լ.Շատուրյան) առաջարկած թեմաները քննարկվել են ամբիոնի նիստում և հաստատվել: Ուսանողներն իրազեկվել են թեմաների և հետազոտական բաղադրիչի կատարման և գնահատման կարգի մասին: Հետազոտական աշխատանքը հիմնականում կրել է խմբային բնույթ: Կատարած աշխատանքի գնահատականը համարվել է որպես 2-րդ ընթացիկ ստուգման գնահատական: Թեմաները հիմնականում կրում են ինքնուրույն աշխատանքի բնույթ, որի կատարման ընթացքում ուսանողներն ինքնուրույն ուսումնասիրում են դարձնթացի մեջ չընդգրկված թեմաները և դրանք իրականացնում են ծրագրային հավելվածի տեսքով:

Որոշ ուսանողների մոտ դժվարություններ են առաջացել աշխատանքը մինչև վերջ կատարելու առումով: Մակայն նրանք հիմնականում գոհ են դասախոսի աջակցությունից ինչպես հետազոտության մեթոդաբանության ընրության, այնպես էլ գրականության փնտրման և դրա հետ աշխատելու առումով:

Աշխատանքների կատարման նկատմամբ ուսանողների մոտեցումները շատ տարբեր է եղել: Եղել են աշխատանքներ, որոնց հեղինակները բացի դասախոսի տրամադրած գրականությունից ուսումնասիրել են լրացուցիչ գրականություն, ներկայացրել են լրացուցիչ մեթոդներ և խնդիրներ: Եղել են նաև աշխատանքներ, որոնց հեղինակները սահմանափակվել են տրամադրված գրականության թարգմանությամբ և կիրառմամբ:

Ուսանողները ներկայացրել են ըստ պահանջված ձևաչափի ձևակերպված աշխատանքներ և պատրաստել են սահիկաշար: Ուսանողները հիմնականում բավարարված են գնահատման մեթոդներից: Գտնում են, որ ճիշտ է գնահատվել իրենց կատարած աշխատանքը:

Արտահայտվեցին-Գ.Սարգսյանը, Գ.Միմոնյանը, Մ.Ճաղարյանը, Բ.Օթարյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետազոտական բաղադրիչը նպաստում է ուսանողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Դասախոսները գտնում են, որ հետազոտական թեմաները պետք է համապատասխանեն ոլորտի արդի և չլուծված խնդիրներին, ուսանողներին պետք է

ներկայացվի հետազոտության մեթոդաբանությունը, հնարավորինս բացառվեն պարզապես ինքնուրույն աշխատանք ենթադրող թեմաները:

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 7/3

Ընդունելի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ «Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում», հարցի վերաբերյալ գեկուցումով հանդես եկան Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը:

Զեկուցողները ներկայացրեցին, որ «Ինֆորմատիկա» մասնագիտության առկա ուսուցման համակարգի թվով 18, հեռակա ուսուցման թվով 15, «բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի թվով 13 ավարտական կուրսի ուսանողներին ներկայացվել է ավարտական աշխատանքների կատարման և գնահատման կարգը, պարբերական հաշվետվողականության ձևերն ըստ աշխատանքների կատարման պլան-ժամանակացույցի, աշխատանքի ներկայացման կարգը, գնահատման չափանիշները և եղանակը:

Ըստ պլան ժամանակացույցի հսկվում է ավարտական աշխատանքների կատարման ընթացքը;

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Զ.Օթարյանը:

ԲԱՅ քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 7/4

Օրակարգի չորրորդ՝ «2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ

«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ համար ներկայացվում է «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման անվճար համակարգի երրորդ կուրսի ուսանող Սահակ Գուլակյանի թեկնածությունը:

«ՀԱՄԼԵՏ ԿԱՐՍՅԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ համար ներկայացվում է

«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման անվճար համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի Մերի Հրայրի Խուդավերդյանի թեկնածությունը:

«ԱՐՏԱԿ ՅՈՒՅՈՒԼՅԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ համար ներկայացվում է

«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման անվճար համակարգի չորրորդ կուրսի ուսանողուհի Իննա Հրայրի Հարությունյանի թեկնածությունը:

«ԱՐՅԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԼԵՆՏՈՒՇ ԳՅՈԶԱԼՅԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ համար ներկայացվում է

«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման անվճար համակարգի չորրորդ կուրսի ուսանողուհի Սվետլանա Կարենի Մելիքբեկյանի թեկնածությունը:

Արտահայտվեցին Գ. Միմոնյանը, Ա.Հովակիմյանը

Ֆակուլտետի գիտխորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 7/5

ՈՐՈՇԵՑԻՆ- Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Օրակարգի հինգերորդ՝ « Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների Moodle համակարգում նյութերի տեղադրման, փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Գ.Սիմոնյանը և Ա.Հովակիմյանը:

Նշվեց, որ մինչև փետրվարի 15-ը E-learnig հարթակում տեղադրվել են բոլոր դասընթացների օրացուցային աշխատանքային պլանները, գնահատման մարտավարությունը:

Նախքան դասը կամ դասից հետո պետք է տեղադրել տվյալ շաբաթին վերաբերող դասախոսությունները, լուծված առաջադրանքների օրինակներ, հանձնարարությունները: Ստուգումները կազմակերպել Moodle համակարգի միջավայրում: Կիրառել E-learnig հարթակում ներդրված հակադարձ կապի մեխանիզմը:

Արտահայտվեցին-Լ.Ծատուրյանը Գ.Գուլակյանը , Բ.Օթարյանը :

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 7/6

Ընդունել ի գիտություն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ